



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

18 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Վարդուհի Սարգսյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
Վարդուհի Սարգսյանը 2016թ. սեպտեմբերի 28-ին դիմել է ՀՀ սահմանադրական
դատարան՝ խնդրելով.

«1. Գործող ՀՀ Սահմանադրության 28, 29, 61, 63, 75, 78 և 79 հոդվածներին
հակասող և անվավեր ճանաչել.

• ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ
կետը.

• ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին
մասի «եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ» արտահայտու-
թյունը»:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածը չի պարունակում վճարել բողոքը վարույթ ընդունելու հարցի քննարկումն ապահովելու համար ընթացակարգեր, ինչի պարագայում վճարել դատարանի կողմից պատշաճ ներկայացված բողոքները վարույթ ընդունելու պարտականությունը դառնում է ոչ իրատեսական, խախտվում է ՀՀ Սահմանադրության /2015 թվականի խմբագրությամբ/ 75-րդ հոդվածով սահմանված անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի պահանջը, ինչի արդյունքում խախտվում և ոչ իրատեսական է դառնում վճարել դատարանի՝ որպես դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 2-րդ մասը, ինչպես նաև 234-րդ հոդվածը փոխկապակցված են: Վերջինս դրսևորվում է նրանում, որ եթե բողոքի բովանդակության մեջ առկա չեն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի վերաբերյալ փաստարկներ, ապա բողոքը չի բավարարում 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով սահմանված՝ վճարել բողոքի բովանդակությանն առաջադրվող ձևական չափանիշները, և ըստ 233-րդ հոդվածի՝ այդպիսի բողոքը թերի է, և այն պետք է վերադարձվի՝ մատնացույց անելով այն ձևական սխալները, որոնք թույլ են տրվել, տրամադրելով ժամկետ՝ այն կրկին ներկայացնելու համար: Մինչդեռ ՀՀ վճարել դատարանը մերժում է վարույթ ընդունել օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերը և 231-րդ հոդվածով սահմանված չափանիշներն ամբողջությամբ բավարարող վճարել բողոքները՝ մատնանշելով ոչ թե բողոքի թերությունը, այլ ինչ-որ հիմնավորումների կամ համեմատությունների բացակայությունը:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի՝ **«եթե վճարել դատարանը հանգում է այն հետևության, որ»** արտահայտությունը /իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ հանդերձ/ վճարել դատարանի՝ նույն մասով սահմանված չափանիշների համաձայն բողոքը վարույթ ընդունելու պարտականությունն իմաստազրկում է՝ այն դարձնելով բացարձակ հայեցողական լիազորություն, ինչի պարագայում վճարել դատարանի՝ որպես ՀՀ Սահմանադրության /2015 թվականի խմբագրությամբ/ 61-րդ հոդվածով սահմանված դատական

պաշտպանության արդյունավետ միջոցի, իրավունքը խախտվում է, այսինքն՝ օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի՝ **«Էթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ»** արտահայտությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ա/ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել **ենթադրյալ օրենսդրական բացով**: Օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, էթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք: Չարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան

իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի փաստարկներն առ այն, որ «... ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածը չի պարունակում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի քննարկումն ապահովելու համար ընթացակարգեր, ... ինչի արդյունքում խախտվում է և ոչ իրատեսական է դառնում վճռաբեկ դատարանի՝ որպես դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը», ակնհայտ անհիմն են, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ դիմողի հանդեպ կայացրած 2016 թվականի ապրիլի 27-ի որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ այն ստորագրել են պալատի նախագահը և թվով 8 դատավորներ, այն պարագայում, երբ համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը կազմված է պալատի նախագահից և ինը դատավորից, իսկ խնդրո առարկա իրավակարգավորման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ պալատի նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով, վճռաբեկ բողոքը համարվում է վարույթ ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը: Այսինքն, ակնհայտ է խնդրո առարկա իրավակարգավորմամբ նախատեսված պահանջների պահպանված լինելու հանգամանքը: Հետևաբար, բացակայում են այն չափանիշները, որոնցից որևէ մեկի առկայությամբ պայմանավորված հնարավոր կլինեի դիմողի կողմից վկայակոչված «օրենսդրական բացը» սահմանադրական դատարանի քննության առարկա դարձնելը:

բ/ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի՝ **«եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ»** արտահայտության մասով դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել սահմանադրական

դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությանը ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, ինքնանպատակ չէ և համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, ինչը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ **անմիջական պատճառահետևանքային կապ է առկա** վիճարկվող օրենսդրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, պահանջ, ինչը չի բավարարում Սահմանադրական դատարան ներկայացված՝ խնդրո առարկա անհատական դիմումը: Դիմողի փաստարկներն ակնհայտ անհիմն են, քանի որ օրենսդիրը հստակ սահմանազատել է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջների 2 խումբ՝ ձևական և բովանդակային: Ընդ որում, եթե ձևական պահանջներին անհամապատասխանությունը հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքը վերադարձնելու համար, ապա բովանդակային պահանջներին անհամապատասխանությունը հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու համար: Մասնավորապես, եթե օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի այն կետի առկայության մասին հիմնավորումները, որը, ըստ բողոք բերողի, հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար, ապա վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը մերժվում է, եթե, ի թիվս այլնի, բացակայում են օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, այսինքն՝ բացակայում են ոչ թե լոկ դրանց առկայության կամ բացակայության վերաբերյալ փաստարկները, այլ դրանց առկայության վերաբերյալ հիմնավորումները: Այսինքն, դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանի կողմից մերժվել է ոչ թե այն պատճառով, որ դիմողը չի

ներկայացրել օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան կետի **առկայության մասին** փաստարկներ, այլ այն պատճառով, որ դիմողը բավարար կերպով չի ներկայացրել օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան կետի **առկայության հիմնավոր լինելու** վերաբերյալ փաստարկներ: Ինչ վերաբերում է դիմողի կողմից վիճարկվող՝ օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի՝ **«Թե վճարել դատարանը հանգում է այն հետևության, որ»** արտահայտությանը, ապա դրա վերաբերյալ դիմողի փաստարկները, որոնք ուղղված են վճարել բողոքի վերադարձման և մերժման հիմքերի սահմանազատմանը, որևէ կերպ չեն հիմնավորում, թե ինչ **անմիջական պատճառահետևանքային կապ է առկա** վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Վարդուհի Սարգսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 հոկտեմբերի 2016 թվականի

ԵՍԸ Ի 2/28